ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 6, 1956 Биол. и сельхоз. науки

Պտղաբուծություն

Է. Ս. ՄՈՐԻԿՅԱՆ

ՍԱԼՈՐԵՆՈՒ ԿՈԼՏՈՒՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սալորենին Ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում, այդ թվում և Աշտարակի շրջանում, հանդես է գալիս սորտերի ու ձևերի մեծ բազմազանությամբ։ Այդ բազմազանությունը բացատրվում է նրանով, որ տվյալ կուլտուրան մինչև վերջին ժամանակներս բազմացվել է միմիայն կորիզների միջոցով, որի հետևանքով էլ ստեղծվել են մի շարք հատկանիշներով իրարից տարբերվող և տնտեսական առանձին արժեք ներկայացնող սորտեր ու ձևեր։

Այստեղ, բացի Վիկտորիա, Վենդերկա իտալական, Վազիրի, դեղնաշլոր, ճանճուր և այլ հայտնի սորտերից, մենք հայտնաբերել և ուսումնասիրել ենք սև դամբուլ, քաղցրակորիզ սալոր, դամբուլաշլոր, կանաչկենի, սալոր № 1 և սալոր № 2 սորտերն ու ձևերը, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել թե արտադրության մեջ արմատավորելու և թե սելեկցիոն աշխատանքներում օգտագործելու տեսակետից։

Ստորև բերում ենք դրանցից ամենահետաքրքիր սորտերի՝ սև դամբուլի և քաղցրակորիզ սալորի նկարագրությունը։

Սեվ դամբուլ

Սև դամբուլը լայնորեն տարածված է շրջանի Աշտարակ, Օշական և Փարպի գյուղերի թե կոլտնտեսությունների և թե կոլտնտեսականների տնամերձ այգիներում։

Ծառերը *միջին մեծության են, 20 տարեկան հասակում ունեն 3,8 մետր բարձրություն, 4,6 մետր սաղարթի և 16 սմ ընի տրամագիծ, ճյուղավորումն ուժեղ է, միամյա շիվը գունավորված, 35—80 սմ երկարությամբ։*

Տերևները *խոշոր են, հակառակ ձվաձև, 96 մմ երկարությամբ և 52 մմ լայնությամբ։ Տերևաթիթեղի մակերևույթը հարթ է, թավապատ, մուգ կանաչ գույնի, գագաթը կլորավուն, եզրերը խոշոր, կլոր-ատամնավոր։ Տերևակոթը բաց կանաչ գույնի է, 32 մմ երկարությամբ։*

Պտուղները *խոշոր են կամ միջին մեծության, օվալաձև, 42,8×38,3×38,9 մմ չափերով և յուրաքանչյուրը կշռում է միջին հաշվով 34 գրամ։ Զագարը միջին մեծության է, պտղակարը պտուղը բաժանում է երկու անհավասար մասերի։*

Պտղի մաշկը *սև-կապտավուն գույնի է, խիտ մոմաշերտով պատած,*

ունի միջին հաստություն, մանր, ենթամաշկային դեղին կետերով, պտղամսից չի անջատվում։

Պտղամիսը միջին ամրության է, կանաչավուն-բաց դեղնավուն գույնի, շատ քաղցր է, հյութալի, կորիզից անջատվում է։ Հյութը բաց կանաչ գույնի է։

Կորիզները խոշոր են, հակառակ ձվաձև, 23,6×13,3×8,5 մմ չափերով և կշռում են միջին հաշվով 1,42 գրամ, որը կազմում է պտղի ընդհանուր կշռի 4,4%-ը։

Հասունացման ժամկետը.—Պտուղները հասունանում են օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 10-ը ընկած ժամանակաշրջանում։

Սորտի հատկանիշները.—Սև դամբուլը բերքատու սորտ է, ցրտահարություններից, հիվանդություններից ու վնասատուներից շատ քիչ է տուժում։ Պտուղներն աչքի են ընկնում իրենց բարձր շաքարայնությամբ։ Պարունակում են 17,2% ընդհանուր շաքարներ։ Օգտագործվում են թարմ վիճակում։

Նկատի ունենալով այս սորտի լավագույն հատկանիշները, կարելի է խորհուրդ տալ արտադրության մեջ այն ներդնելու համար։

Քաղցրակորիզ սալոր

Սալորենու քաղցրակորիզ սորտը 1953 թվականի էքսպեդիցիայի ժամանակ մեր կողմից հայտնաբերվել է շրջանի Օշական գյուղի կոլտնտեսականների տնամերձ այգիներում, որտեղ այդ սորտից կա ընդամենը մեկ ծառ։

Ծառը միջին մեծությունից փոքր է, 20 տարեկան հասակում ունի 2,6 մետր բարձրություն, 5,0 մետր սաղարթի և 18 սմ բնի տրամագիծ։ Ճյուղավորումը միջակ է, միամյա շիվը բաց կանաչավուն, արևահայաց կողմում գունավորված, 20—40 սմ երկարությամբ։

Տերևները միջին մեծության են, ձվաձև, 63 մմ երկարությամբ և 40 մմ լայնությամբ։ Տերևաթիթեղը բաց կանաչ գույնի է, քիչ թավոտ, մակերևույթը հարթ, ծայրը սուր, եզրերը մեկական սուրատամնավոր։ Տերևակոթը բաց կանաչ գույնի է, 28 մմ երկարությամբ։

Պտուղները համեմատաբար մանր են, օվալաձև, 34,4×30,3×28,5 մմ չափերով և կշռում են միջին հաշվով 20-ական գրամ։ Զագարը փոքր է, պտղակարը պտուղը բաժանում է երկու հավասար մասերի։

Պտղի մաշկը հիմնականում դեղին գույնի է, արևահայաց կողմում 1/2 մասով գեղեցիկ մորենագույն, ունի միջին հաստություն, պտղամսից չի բաժանվում։

Պտղամիսը դեղին գույնի է, հյութալի, քաղցր, դուրեկան թթվաշ համով, կորիզից անջատվում է։

Կորիզները ձվաձև են, միջին մեծության, 20,5×12,9×7,8 մմ չափերով, կշռում են, միջին հաշվով, 0,92-ական գրամ, որը կազմում է պտղի ընդհանուր կշռի 4,6%-ը։

Միջուկը քաղցր է, 0,30 գրամ կշռով։

Հասունացման ժամկետը.—Պտուղները հասունանում են վաղ ժամկետում՝ հուլիսի 15—30-ը ընկած ժամանակաշրջանում։

Սորտի հատկանիշները.—Ծառը միջին չափի բերքատու է, ցրտահարություններից, հիվանդություններից ու վնասատուներից տուժելու տեսակետից ևս միջին տեղ է գրավում։

Սալորենու քաղցրակորիզ սորտը հետաքրքրություն է ներկայացնում սելեկցիոն աշխատանքներում սալորի վաղահաս և քաղցրակորիզ սորտեր ստանալու տեսակետից։

Э. С. МОРИКЯН

КУЛЬТУРА СЛИВЫ В АШТАРАКСКОМ РАЙОНЕ АРМЯНСКОЙ ССР

Резюме

В садах многих районов Армянской республики, в том числе и в Аштаракском районе, встречается в большом количестве сорта и формы слив. Это разнообразие объясняется тем, что слива в последнее время размножилась лишь при помощи косточек. Здесь кроме известных сортов Виктория, Венгерка итальянская, Вазири, дегнашлор, чанчур нами были исследованы и выявлены сорта и формы сев дамбул, сладкоядерная слива, дамбулашлор, каначкени, слива № 1 и слива № 2, которые могут быть рекомендованы как для внедрения в производство, так и для использования в селекционной работе.

В статье описываются из них наиболее перспективные сорта сев дамбул и сладкоядерная слива.